

զութեան գրականութիւնը պիտի գայ այդ լայնախոհութիւնը տարածելու ժողովուրդներու մէջ։ Այսպէսով ո՞քան կիրքեր չանդարտած պիտի ըլլան։

Քաղաքուրթութեան բերած փոփոխութիւններու պատճառով, կը զարմանանք Միջին Դարու կրօնական խորական ոգինն վրայ զոր հաւատաքննութիւնը ստեղծեց։ Յետպայ գարերու մարդիկը պիտի զարմանան մեր վրայ, որ նոյն բանը կ'ընենք յանուն ազգութեան եւ անջատ պետականութեան գաղափարին։

—

Ինչպէս որ կեանքի մէջ ուշ մնալը յեղափոխութեան դուռ կը բանայ, նոյն պէս անժամանակ մաքերու գործադրութիւնը առեր ու կործանում կը բերէ իրեն

Հետո: Բոլոր կաղմակերպութիւնները և անոնց ծրագիրները մէկ նպատակ միայն ունին. իրականացնել խաղաղութիւնը և երջանկութիւնը երկրի վրայ։ Այդ բարձր իտէալն է որ կը ղեկավարէ անոնց բոլոր գործունէութիւնը։

Բայց միայն բարի կամեցողութիւնները բաւական չեն։ Երբ անցեալի փորձերը անյաջողութեան են մասնուեր, կը նշանակէ այդ բարի կամեցաղութիւններէն անջատ կան պայմաններ, որոնց լրացումէն յետոյ կարելի պիտի ըլլայ այդ բոլորը։ Խաղաղութեան գրականութիւնն է դարձեալ, որ պիտի գայ այդ գործը կատարելու։

Այսպէս ինայուած պիտի ըլլան նաեւ միլիոնաւոր կեանքեր։

Փարիզ ԳՐԻԳՈՐ ԴՕՆՉԵԿԻԼԵԱՆ

ԴՐՈՒՅԹ ՅԱԿԻՑԵՆԻՑ

ՄԻ ԱՄՆ։

ԱՇԱՔԻՆ. —

ԵԿԻՈՒ.՝

ԵՐԻԾԱԾԱՐԴ.՝

—

Գործողութիւնը ժամանակից եւ տարածութիւնից դուրս։

—

ՏԵՍԻԼ. I.

Ամպերից վերեւ բարձրաբերձ լեռների գաղաթներ, Մի ճեղք, որ կազմում է յաւիտենականութեան դուրս, երիտասարդը, սպիտակ զգեստաւորուած, փայլուն սուրը ծեռին կանգնած է ճեղքի մօտ։ Թանձր մշուշ։

ՄԻ ԱՄՆ. — (Փայոք ետեւից) Եւ այդպէս է լինելու յաւիտենա յաւիտենից։ Տարոց տարի, գարէ ի դար։ Յաւիտենան եւ անփոփոխ։ Անսկիզբ եւ անվերջ։ Ես ասացի եւ էր, եւ կայ, եւ լինելոց է։ Յաւիտենա յաւիտենից։

ԵՐԻԾԱԾԱՐԴ. — (Երեւ արձագանդ) Յաւիտենա յաւիտենից։

ՄԻ ԱՄՆ. — Եզդ է օրէնք տիեզերքի։ Անսաշման եթերի տարածութեան մէջ իշխում է միայն իմ կամքը, որ անփոփոխ է եւ անողոք։

ԵՐԻԾԱԾԱՐԴ. — Անփոփոխ եւ անողոք։

ՄԻ ԱՄՆ. — Եւ արար աշխարհ հպատակ է իմ կամքին եւ ոչ մի երեւայթ չէ կարող խափանել ժամանակի ընթացքը, որ անսկիզբ է եւ անվերջ։

ԵՐԻՑԱՌԱՐԴԻ. — Անսկիզը եւ անվերջ :

ՄԻ ՈՄՆ. — Ոչ ոք եւ ոչինչ չէ կարող խափանել տիեզերքի շարժումը, անթիւ աշխարհների եւ ճողորակների ընթացքը : Յաւտանական են նրանք : Ես ասացի : Եր, կայ եւ լինելոց է :

ԵՐԻՑԱՌԱՐԴԻ. — Եր, կայ եւ լինելոց է :

ՏԵՍԻԼ Ⅱ.

Ժայռերի մօտ երեւում է եկորը : Կորացած, ալեզարդ, երկար մօրուքով, չոր ու ցամաք, երկար ցուպը ծեռին, նա դանդաղ, հեւալով բարձրանում է սարի գազաթը : Երիտասարդը իջեցնում է իւր սուրը եւ կտրում է նրա ուղին :

ԵՐԻՑԱՌԱՐԴԻ. — Կաց, ճաշկանացու : Դու հասար յաւտենականութեան սաշճանին : Ընթանալ յառաջ անփարելի է :

ԵԿԻՈՒ. — Իմ ուղին երկար էր, շատ երկար : Ես արդէն համարեա հասայ նպատակիս : Եւ դու, պատանի, արդիում ես ինձ ընթանալ յառաջ, մինչ յս իմ ուղիի վերջը...

ԵՐԻՑԱՌԱՐԴԻ. — Զկայ ոչ վերջ եւ ոչ սկիզբ : ԵԿԻՈՒ. — Դու սիսալում ես, պատանի : Միքիչ եւս ես կը հասնիմ իմ ուղիի վերջին :

ԵՐԻՑԱՌԱՐԴԻ. — Ո՛չ, ո՛չ եւ ո՛չ : ԵԿԻՈՒ. — Դու անիմաստ երեխայ, ես սկսեցի իմ կեանքի ուղին, լի ոսկեվառ յոյսերով, պատանի, ես ընթացայ յառաջ, եւ աշա յոփնած, վաստակած, լքեալ եւ յունահատ, ես վերջացնում եմ կեանքիս ուղին : Այս է վախճան, պատանի :

ՏԵՍԻԼ Ⅲ.

Ժայռերի ճեղքում երեւում է Մի Ոմն, վեհ եւ ահարկու : Ամբողջապիս մոխրագոյն, նա ծուլում է շրջապատող ժայռերի հնատ : Երիտասարդը չոքում է նրա առաջ, վեր է կինում եւ հեռանում :

ՄԻ ՈՄՆ. — Ոչ գոյ վախճան եւ ոչ սկիզբ : Այն, ինչ որ դու, ճաշկանացու, ընդունում ես իբրև սկիզբ եւ վախճան — մի ակնթարթ է յաւիտենականութեան մեջ, մի վայրիեան ժամանակի անձայր, անվերջ ընթացքում :

ԵԿԻՈՒ. — Օ՛, ոչ : Դու, անծանօթ, սիսալում ես : Ես երկար ապրեցայ, ես երկար մաքառեցի, չարչարուեցայ, ընկայ կուփում, կրկին ոտքի կանդնեցի եւ ճղեցի իմ կոփուլ : Ես տեսայ իմ հարագաների տանջանքները, նրանց արցունքները, ես լսեցի նրանց հառաջանքները, անէծքները, ես լսեցի նրանց կարճատեւ բերկրալից ազաղակները, ցնձալից երգերը... Ես ապրեցայ նրանց ապրումներով եւ այնպէս երկար, երկար...

ՄԻ ՈՄՆ. — Եւ այդ մի ակնթարթ էր միայն :

ԵԿԻՈՒ. — Մի ակնթարթ : Դու ասում ես մի ակնթարթ : Ինչո՞ւ էր, ուրիմն, իմ երկար կեանքը խոր չարչարանքներով, զպկանքներով, պարտութիւններով եւ յաղթանակներով : Մի ակնթարթ :

ՄԻ ՈՄՆ. — Ես ասացի : Դու ինքդ, մաշկանացու, աւազի մի հատիկ ես, մի կաթիլ լայնս ծաւալ ովկիանսի ջրերում, մի աննշան մասնիկ համայն ախեղերքում : Կաս դու, թէ չկաս, — այդ միեւնոյն է աշխարհի համար...

ԵԿԻՈՒ. — Օ՛, ո՛չ, ո՛չ : Իսկ իմ «ես»ը, իմ ձգառումները, իմ ճաքերը եւ խոհերը, որ ես տուի այդ աշխարհին : Միթէ՞ դա ոչինչ :

ՄԻ ՈՄՆ. — Ես ասացի :

ԵԿԻՈՒ. — Իսկ իմ ապրումները, իսկ իմ սաեղծագործութիւնը, իմ երկար կեանքի անդուլ աշխատանքը յօպուտ ճարդկութեան :

ՄԻ ՈՄՆ. — Ունայնութիւն ունայնութեանց :

ԵԿԻՈՒ. — Իսկ իմ յոյսերը, իմ յաղթանակների բերկրանքը, իմ պարտութիւնների յուսահատութիւնը եւ այդ ամէնը...

ՄԻ ՈՄՆ. — Ունայնութիւն ունայնութեանց :

ԵԿԻՈՒ. — Օ՛, ինայիբ դու, անծանօթ, աշուիլ եւ իստասիրտ :

ՄԻ ՈՄՆ. — Դու սխալում ես, ճաշկանացու : Իմացիր, քո բոլոր ապրումները, իղձերը, քո ճրշտական կոփուլ մի լսկալի փորձ էր փոփոխել անփոփոխ, նախտասահմանուած յաւիտենականութիւնը եւ նրա անխախտ օրէնքները :

ԵԿԻՈՒ. — Օ՛, լոիր, լոիր... Դու կտոր կտոր անում ես իմ խեղճ սիրաբ :

ՄԻ ՈՄՆ. — Հասկացիր, ճաշկանացու : Ամէն ինչ կը լինի ինչպէս կայ եւ ամէն ինչ կայ ինչպէս լինելոց է :

ԵԿԻՈՒ. — Առւտ էր, սուտ : Ամբողջ իմ կեան-

քը անցաւ շինարարութեան եւ ստեղծագործութեան երկունքի մէջ. ես՝ երկար գործեցի. ես օգնեցի վաստակեալներին, ընկանառներին, բնականներին. ես տուի իմ եղբայր մարդկանց իմ կեանքի ամենագեղեցիկ օրերը, տարիները: Ես շինեցի նրանց բաղզի տաճարը, նրանց լուսաւոր ապագան: Եւ ես արդէն վերջացնելու վրայ էի այդ հրաշտիառ տաճարը, որի կաթողիկէն ոլանում էր դէպ ի երկինք, դէպ ի առաղերը... Ես կեանքի շինարարն եմ: Իմացիր, ես ձուլեցի զանգեր, սրոնք աւետիս պիտի տան արար աշխարհին եւ պիտի գոչեն, որ եկել է, հասել է սիրոյ, ծիռթեան եւ եղբայրութեան սոկի գարը:

ՄԻ ՈՒՆ.— Եւ ոչ ոք չլսեց քո զանգերի զօդանջևնը: Լուս են նրանք:

ԵԿԻՈՐ.— Ո՛չ, ո՛չ... նրանք կը զօղանջեն, այս՝, կ'աւետեն իմ զաղափարները: Այստեղ են իմ աշակերտները, իմ հետեւողները. նրանք կ'աւարտեն այն մեծ գործը, որ սկսեցի ես: Եւ կը զօղանջեն այն ժամանակ իմ մեռքով ձուլած զանգերը, կը զօղանջեն յաղթալից եւ փառաւոր. նրանց մեղեդին, իբրև եղեծի մի երգ, կը համնի հաղարաւոր թրշուառների, խեղձերի ականջին: Եւ ոտքի կը կանգնին նրանք, կը փշեն ստրկութեան զդիմաները եւ ազատ, անհոգ կ'ապրին իրենց նոր, լոյս կեանքով:

ՄԻ ՈՒՆ.— Նոր, լոյս կեա՞նք: Զկայ նոր կեանք. կայ մի կեանք միայն, անփոփոխ, յի տանջանքներով, անիրազորների ձգտութերով եւ որոնութերով, մի անգոյն ձանձրալի, աննպատակ կեանք: Դու սիսլիմում կեանք:

ԵԿԻՈՐ.— Երբեք, կեանքը զնում է յառաջ եւ յառաջ. նա կատարելագործւում է. նա բաց է անում նոր ուղիներ, նոր հորիզոններ...

ՄԻ ՈՒՆ.— Ո՛, գիտեմ, դա մարդկութեան սփոփանցն է, մի խաղալիք նրա ձեռքում, դա միայն միշտ կայուն հնի նոր կեղեւն է, միշտ մնայուն կութեան նոր մեւը:

ԵԿԻՈՐ.— Ո՛չ, ո՛չ... Ես տեսել եմ վերածնուած մարդկութեան ուրախութէծքերը. լսել եմ նրանց բերկրալից աղաղակները: Միթէ այդ մի խարսուիկ երազ է, մի անիրազորների ձգտում, զառանցանքի մի թռիչք...

ՄԻ ՈՒՆ.— Գիտեմ, մաշկանացու, դու տեսել ես այդ ամէնը եւ վերջ ի վերջոյ եկել ես այսաեղ, յաւիտենականութեան դուռը, իմանալու մի անխախտ, մի զուտ, մի կատարեալ ճշմարտութիւն, եւ

այդ ճշմարտութիւնը խօսում է իմ բերնով.— «Աւնայնութիւն ունայնութեանց եւ ամէն ինչ ունայնութիւն»:

ԵԿԻՈՐ.— Ինչո՞ւ էին ուրեմն իմ տանջանքները, իմ կոխւը, իմ անքուն զիշերները, ստեղծագործութեան երկունքը, իմ որոնութերը... Ինչո՞ւ:

ՄԻ ՈՒՆ.— Լոի՛ր, մաշկանացու. զու անսխալ ճակատազրի պատուերով եւ նրա անխղելի օրէնքներով եկար յաւիտենականութեան դուռը եւ անկատար թօղիր այնտեղ մարդկութեան բաղզի հրաշափառ տաճարը: Ուրիշները, քեզ նմանները, կը սկսին շնել մարդկութեան բաղզի նոր տաճարներ եւ, չաւարտելով, նոյն ուղիով կուգան այստեղ անսահման ու խոր տարածութեան եւ ժամանակի մէջ յաւիտենականութեան պատուանդանին: Եւ այդպէս դարէ ի զար, անվերջ եւ անսկիզբ: Խոկ կեանքը այնտեղ, երկրի. տիեզերքի մի աննշան հասակի վրայ, կը թնայ իւր էւոթեածը անփոփոխ, անխախտ: Եյնտեղ միշտ զօրեղը կը հարստահարէ անզօրինն, այնտեղ միշտ կը ափրէ լացը, կոծը եւ անարդարութիւնը: Կոկիծը եւ զրկանքը այնտեղ միշտ կը բաղիսն խրճիմների դռները, խոկ ուրախութիւնը, լիութիւնը ու փարթաճութիւնը հոյակապ պալատների դռները: Հազարաւոր մարդիկ պիտի չարաշար տանջուին յանուն բարօրութեան անհատի, մէկի միայն, նրա քճահաճոյքների, նրա ցանկութիւնների համար: Եւ աշխարհը, մաշկանացու, երբեք, լսո՞ւմ ես, երբեք չի տեսնիլ բաղզի երեսը եւ երբեք սէրը: Եղբայրութիւնը եւ աղատութիւնը չեն կարող տիրել այնտեղ: Կը տապալուին քո շինած միան չոյակապ տա ձարները աղազարակապ մուաքը եւ միան չղջիկները:

ՄԻ ՈՒՆ.— Մի բորբոսնին քո զանգերը, եւ կրկին աշխարհին կը տիրեն ինչպէս եւ առաջ, ինչպէս եւ միշտ, քէնը, ասելութիւնը, յուսահատութիւնը եւ ատամների կրծառութը:

ԵԿԻՈՐ.— Ո՛, ինայիր, ինայիր ինձ: Երիւնս սաւզում է երակներիս մէջ եւ սիրս զաղարում է բարախել:

ՄԻ ՈՒՆ.— Եւ մարդկութեան բոլոր որոնուծները, նրա ամէն ձգտութերը զէպ ի բարին, լաւը,

վեհը եւ կատարեալը, դէպի լուսափայլ բարձունքը,
դէպի ասաղերը — միայն խղճալի փորձեր են եւ
ոչ աւելի: Մարդկութեան թեւերը կապած են, կաշ-
կանգուած. նա գիտէ սողալ եւ չէ կարող թռչիլ:

ԵԿԻՈՐ. — Կապած են... առ մի՞շտ:

ՄԻ ՈՄՆ. — Խբրեւ երազ, լի զարհուրելի աւ-
սիլներով, անցնում է մարդկային կեանքը որոնում-
ների, յանդուղն ձգտումների եւ թռիչքների յուսա-
հատ փորձերի մէջ եւ միշտ վերջանում է նրանց
պարտութիւնով, անկումով, եւ միայն անխուսափելի
մահը, փակելով այդ խեղճ մարտիրուների աչքերը,
տալիս է նրանց յաւիտենական հանդիստ:

ԵԿԻՈՐ. — Մա՛հը: Գու ասում ես մահը: Այո,
ես լսում եմ մահուան հրեշտակի թեւերի խշխչոցը,
ես զգում եմ նրա ցուրտ շունչը: Թող գայ մահը...
ես...

ՄԻ ՈՄՆ. — Եւ նա կը գայ, մահկանացո՞ւ
(ձեռնով նօան է տալիս. երեւում է Երիտասար-
դը նրան) կատարի՛ր... (Երիտասարդը մօտենում

է Եկուորին եւ դիպչում է նրա կրծքին իւր սրով:
Սրու եւ փայլակի):

ԵԿԻՈՐ. — Կա՛ց: Ես լսում եմ իմ զանգերի
դողանջիւնը: Օ՛, նրանք աւետում են արար աշ-
խարհին սէր..., լսո՞ւմ էք...

ՄԻ ՈՄՆ. — Այդ զարկում է քո օրհասական
ժամը:

ԵԿԻՈՐ. — Ի՞մ... իմ ժամը (Երիտասարդը
կրկին դիպչում է սրով Եկուորի կրծքին եւ վեր-
ջինս փռփում է անօւնչ գետին):

ՄԻ ՈՄՆ. — Մարդը աւարտեց իւր կեանքը:
Այդպէս էր, կայ եւ լինելոց է յաւիտեանս յաւիտե-
նից: (Անհնետանում է: Մի փոքր դադար):

ԵՐԻՑԱՄԱՐԴԸ. — Յաւիտեանս յաւիտենից:

ՎԱՐԱԳՈՅՐ

Եռու Նախիջեւան, 1929